

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

30.10.2014

Ք. Իջևան

Ներկա էին խորհրդի բոլոր անդամները.

Հրավիրված էր նաև մասնաճյուղի գիտքարտուղար՝ Մ. Աթոյանը:

Օրակարգ

1. Առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների արդյունքների ամփոփում:

/Զեկուցող՝ Վ. Ալեքսանյան/

2. Ընթացիկ քննությունների անցկացման կարգի մասին:

/Զեկուցող՝ Վ. Ալեքսանյան/

3. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ՝

1-ին կետի վերաբերյալ զեկուցողը նշեց, որ 1-ին ընթացիկ քննությունները և ստուգումները անցկացվեցին նախապես կազմված ժամանակացույցով սթ. հոկտեմբերի 13-ից 25-ը: Նշված ժամանակահատվածում կազմակերպվել է 69 քննական գործընթաց՝ 33 ընթացիկ ստուգում, 36 ընթացիկ քննություն: Քննական գործընթացներին մասնակցել է ֆակուլտետում սովորող 260 ուսանող.

Անգլերեն լեզու և գրականություն մասնագիտությունում՝ 75, Պատմություն մասնագիտությունում՝ 62, Հայոց լեզու և գրականություն մասնագիտությունում՝ 50, Մանկավարժություն և հոգեբանություն մասնագիտությունում՝ 40, Ֆրանսերեն լեզու և գրականություն մասնագիտությունում՝ 33 ուսանող: Պետք է արձանագրել, որ արդյունքները միջինից բարձր էին: Մասնավորապես կային առարկաներ, որոնց ընթացիկ քննությունից ուսանողների մոտավորապես 90%-ը և ավելին ստացել են առավելագույն միավորներ: Դա

նկատելի էր հատկապես «Մանկավարժություն և հոգեբանություն» մասնագիտության ուսանողների մոտ: Վ. Ալեքսանյանը մատնանշեց նման արդյունքների ձևավորման երկու պատճառ. առաջին՝ ուսանողները լավագույն կերպով յուրացրել էին տվյալ դասընթացը և մեծ պատասխանատվությամբ էին պատրաստվել ընթացիկ քննություններին: Երկրորդ՝ դասախոսների մի մասը թեստային առաջադրանքները կազմել էր ոչ պրոֆեսիոնալ մակարդակով: Զեկուցողը մանրամասն ներկայացրեց առաջին ընթացիկ քննություններից հետո ֆակուլտետում արձանագրված ակադեմիական պատկերը.

Պատմություն մասնագիտության 1-ին, 2-րդ և 3-րդ կուրսերում ընթացիկ քննություններից և ստուգումներից միջին գնահատականը կազմել է համապատասխանաբար 2.56 և 5.55 միավոր:

Հայոց լեզու և գրականություն մասնագիտության 1-ին, 2-րդ և 3-րդ կուրսերում ընթացիկ քննություններից և ստուգումներից միջին գնահատականը կազմել է համապատասխանաբար 2.42 և 5.32 միավոր:

Մանկավարժություն և հոգեբանություն մասնագիտության 1-ին, 2-րդ և 3-րդ կուրսերում ընթացիկ քննություններից և ստուգումներից միջին գնահատականը կազմել է համապատասխանաբար 3.00 և 6.69 միավոր:

Անգլերեն լեզու և գրականություն մասնագիտության 1-ին, 2-րդ և 3-րդ կուրսերում ընթացիկ քննություններից և ստուգումներից միջին գնահատականը կազմել է համապատասխանաբար 2.25 և 5.73 միավոր:

Ֆրանսերեն լեզու և գրականություն մասնագիտության 1-ին, 2-րդ և 3-րդ կուրսերում ընթացիկ քննություններից և ստուգումներից միջին գնահատականը կազմել է համապատասխանաբար 1.84 և 6.14 միավոր:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

Մ.գ.թ., դոցենտ Վ. Բրուսյանը, Բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, Բ.գ.թ., դոցենտ Ա.Սարհատյանը, ասիստենտ՝ Ա. Մարդանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հումանիտար գիտությունների ֆակուլտետի 2014-2015 ուստարվա 1-ին կիսամյակի

1-ին ընթացիկ քննությունների և ստուգումների արդյունքները համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ՝

Օրակարգի 2-րդ կետի՝ ընթացիկ քննությունների անցկացման կարգի մասին, զեկուցեց ֆակուլտետի դեկան Վ. Ալեքսանյանը: Տեղի ունեցավ մանրամասն քննարկում, որի ընթացքում ներկայացվեցին ընթացիկ քննությունների անցկացման պահանջների և սահմանված գնահատման չափանիշների մասին տեսակետեր: Դեկանը հայտնեց, որ ընթացիկ քննությունների թեսթի նմուշը՝ 4 հարց՝ 2 ենթահարցով, ժամանակի ընթացքում քննություն չբռնեց և հիմա յուրաքանչյուր դասախոս կարող է որոշել իր առարկային առանձնահատուկ թեստի նմուշը: Վ. Ալեքսանյանը հայտարարեց, որ մինչև 2-րդ ընթացիկ քննությունների սկիզբը ամբիոնի վարիչները ամբիոններում քննարկեն և նոր ձևաչափով ներկայացնեն թեստային առաջադրանքները և գնահատման չափանիշները: Վ. Ալեքսանյանը նշեց, որ սա ուղղված է արդյունավետ ու որակյալ ուսումնական գործընթացի կազմակերպմանն ու վարմանը, որակավորման բարձրացմանն ու կատարելագործմանը:

Վ. Բրուսյանը արտահայտեց իր մտահոգությունը ընթացիկ ստուգումների գնահատման չափանիշների վերաբերյալ: Նա նշեց, որ չկա պետական քննական գնահատման հստակ չափորոշիչ, թե ստուգարքի ժամանակ երբ ենք նշանակում 9 միավոր: Նա նշեց, որ ընթացիկ ստուգման վերջնական միավորը պետք է ձևավորվի մի քանի կրթական բաղադրիչներից, որոնցից են սեմինար և գործնական պարապմունքները: Այս ձևով, անշուշտ, կարժևորվեն սեմինար և գործնական պարապմունքները: Ուսանողը պարտավոր է խորությամբ յուրացնել միայն պետական ուսումնական պլանով նախատեսված քննական առարկաները, որոնց քանակը փոքր չէ: Իսկ առանց եզրափակիչ քննության ավարտվող առարկաներից ուսանողը պետք է ունենա ընդհանուր պատկերացում և չպետք է անհարկի ծանրաբեռնել և ընթացիկ ստուգումը վերածել քննության:

Ա. Սարհատյանը գտնում է, որ ընթացիկ ստուգման 9 միավոր չափանիշը բարձր է, պետք է իջեցնել 6-ի: 9-ը պայմանական միավոր է: Նա առաջարկեց հետևյալ ձևը՝ 12+2+6 /սեմինար և գործնական/:

Վ. Ավագյանը նշեց, որ ընթացիկ քննությունը և ստուգումը պետք է լինեն և բանավոր, և գրավոր, որպեսզի ուսանողը հնարավորություն ունենա ինչ-որ բան նաև բանավոր վերարտադրելու:

Մ. Աթոյանը և Վ. Վանեսյանը համամիտ էին Վ. Բրուսյանի հետ, որ ստուգարքը քննություն չէ և պետք է տարբերակել պահանջները:

Ա. Մարհատյանի մտահոգությունը երիտասարդ դասախոսներին օգնելուն էր վերաբերում: Նա առաջարկեց, որպեսզի երիտասարդ դասախոսները փորձաշրջան անցնեն: Փորձառու մասնագետները կարող են թե՛ մեթոդապես, թե՛ պրակտիկապես, թե՛ մանկավարժահոգեբանական պատրաստվածությամբ օգնել երիտասարդ դասախոսի կայացմանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

Մ.գ.թ., դոցենտ Վ. Բրուտյանը, Բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, Բ.գ.թ., դոցենտ Ա.Մարհատյանը, ուսանողներ՝ Վ. Վանեայանը, Դ. Քոքոբեյլյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Մինչև 2-րդ ընթացիկ քննությունների սկիզբը ամբիոններում մշակել և ամբիոնի նիստերում հաստատել յուրաքանչյուր դասընթացի առանձնահատկություններից բխող թեստերի նմուշները, հստակեցնել թեստերի ստուգման և գնահատման չափանիշները:

ԼՍԵՑԻՆ՝

Ընթացիկ հարցերի մեջ դեկանը ի գիտություն ֆակուլտետի խորհրդի անդամների տեղեկատվություն ներկայացրեց ուսանողական զեղչերի վերաբերյալ: Վ. Ալեքսանյանը ներկայացրեց մանդատային հանձնաժողովին դիմած ուսանողների ցուցակը: Նա շեշտեց, որ ֆակուլտետի 6 ուսանողի ուսման վճար զեղչվել է ՀՀ ԿԳ նախարարի սահմանած կարգով, որպես սոցիալապես անապահով ընտանիքի ուսանողներ: Մասնաճյուղի մանդատային հանձնաժողովը զեղչել է ևս 13 ուսանողի վճար: Զեկուցողը նշեց, որ ֆակուլտետի 7 ուսանողի վճար ամբողջությամբ փոխհատուցել է ՎիվաՍել ընկերությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

Բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, մ.գ.թ., դոցենտ Վ. Բրուտյանը, Բ.գ.թ., դոցենտ Ա.Մարհատյանը, ասիստենտ՝ Ա. Մարդանյանը, Մ. Աթոյանը:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Վ. Ալեքսանյան

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Ա. Ղևոնդյան